ԱՐՇԱԼՈՒՅՑ ԱՐՁԱԳԱՆՔԻ

ԿՐԵՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՍԻԱՅԻ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

20

ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՌՈՎՄ

ԵՍ ԵՄ ՃՇՄԱՐԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ

ԱԶԳ

1. Կաթողիկէ Սրձագանգը սա այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վիճակեալի բաժանորդագինն է մէկ մէնիս անոնց համար որ ի Կ. Պոլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարանիներու կամ Առաջնորդարանիներու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրկելու համար՝ Զորս (4) ֆրանք է: Հասցէն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պոլիս փոխադրուի, ծառայն ու ձեռը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանք վերջնականապէս պիտի ճշդուին: — Մէկ թիւը՝ մէկ դահեկան է:

2. Սրձագանգը կը հրատարակուի Շաբաթ օրերը:

3. Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակելու իրեն դրկուած ո՛ւ եւ է յօդուած:

4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը առ-բողջովին կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:

6. Ձեռագիրներ ետ չեն դարձուիր:

7. Ծանուցեալնց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուի:

Ամենայն որ ընդունիցի ի քեզ ինչս քո՝ զանազանս ոմանց յեղանակս վասն հանդէր. զի ընդունիցի որ քեզ հանդէր՝ զանազանել հանդերձս արդարոցն զարդեալս ընդունիցի զարդարոցն ի

Մատթէոս ԺԲ. 41

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԹԱՓԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Առաջին Տարի | 4 Նոյեմբեր 1911 | Թիւ 20.

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՍԻՒՆՀՈԴՈՍ Ի ՀՌՈՎՄ

Ազգային Սիւնհոդոսն ունեցաւ իւր երկրորդ հանդիսաւոր Նիստն՝ Կիրակի օր, 29 Հոկտեմբեր, Ս. Նիկողայոս Տօլմտինեան եկեղեցւոյն մէջ։ Արդէն նախորդ շաբթուան մէջ Մասնակի և Համագումար ժողովներ գումարուած, խորհրդակցութիւններ և քննութիւններ կատարուած էին Սիւնհոդոսական Գործոց առաջին Տիղոսին վրայ. վերջնական վճիռը տրուեցաւ յիշեալ Նիստին մէջ։

Ուստի Կիրակի առաւօտ, ժամը 8ին, հանդիսաւոր Պատարագ մատոյց Արհի. Իգն. Արք. Մալոյեան, Վիճակաւոր Մասպտոյ, ի ներկայութեան Ամենապ. և Գերերջ. Հոգևոր Տիրոջ և Սիւնհոդոսի միւս Հայրերուն։ Ըստ սովորութեան հրաւիրուած էին բազմաթիւ անձնաւորութիւնք.

և առաջիկայ էին նաև շատ ներկայացուցիչ մարմիններ։ Զայնաւորէն վերջը, Հարք գգեստաւորեցան ուրարով և շուրջառով և թագ ի գլուխ։ Ամենապ. Գահերէցն ի դասու կատարեց սովորական աղօթքները, մաղթելու համար Հոգւոյն Սրբոյ զօրավիգն օգնականութիւնը. երգուեցան գեղեցիկ շարականները Շնորհալւոյն և կրկնուեցան Սաղմոսներն և Լամբրոնացւոյն աղօթքն առ Ս. Հոգին. և յաւարտ մաղթանացս, Հարք անցնելով ժողովրդեան մէջէն թափորով ուղևորեցան ի տեղի Սիւնհոդոսի, եկեղեցւոյն միջավայրը։ Այս անգամ Հարց թիւը բազմացած էր, և բազմեցան ըստ կարգի երիցութեան, այսպէս,

1. Ամենապ. և Գերերջ. Հոգևոր Տէր, Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան, Կաթող. — Պատրիարք Տանն Կիլիկիոյ.

2. Արհի. Յովսէփ Արքեպ. Թէոտորովիչ, Վիճակաւոր Լէպոլոի (Լէմպէրկ։)

3. Արհի. Աւետիս Արքեպ. Արփիարեան, Վիճակաւոր Գերմանկոյ (Մարաշ)։

4. Արհի. Յուսիկ Արք. Կիւլեան, նախկին Վիճակաւոր Մամպտոյ (Մարտին)։

5. Արհի. Օգոստինոս Արք. Սայեղեան, Վիճակաւոր Բերիոյ (Հալէպ)։

6. Արհի. Լևոն Արք. Քէչէճեան, վիճակաւոր Սեբաստիոյ — Եւդոկիոյ (Սիվաս-Թոքատ).

7. Արհի. Գրիգոր Արք. Գավրիկեան, Տիտղոսաւոր Մծբնայ, Ընդհանրական Աբբայ Մխիթարեանց Վիեննայ։

8. Արհի. Պետրոս Արք. Գոյունեան, Տիտղոսաւոր Քաղկեդոնի, Ձեռնադրիչ Եպ. հայ ծխի ի Հռոմ։

9. Արհի. Յովսէփ Արք. Ռոքոսեան, Տիտղոսաւոր Ակրիդայ. կաթողիկոսական - Պատրիարքական Փոխանորդ։

10. Արհի. Իգնատիոս Արք. Մալոյեան, Վիճակաւոր Մամպտոյ։

11. Արհի. Ստեփան Եպ. Իսրայէլեան, Վիճակաւոր Խարբերդու (Մամուրէթ-իւլ-ազիզ).

12. Արհի. Յովսէփ Եպ. Մելքիսեդեկեան, Վիճակաւոր Կարնոյ (Էրզուրում)։

13. Արհի. Յակոբ Եպ. Թօփուզեան, Վիճակաւոր Տարօնոյ և Վասպուրականի (Մուշ)։

14. Արհի. Յարութիւն Եպ. Քէքլիքեան, Վիճակաւոր Ատանոյ։

15. Արհի. Գրիգոր Եպ. Պահապանեան, Վիճակաւոր Անկիւրիոյ։

16. Արհի. Անտոն Եպ. Պահապանեան, Վիճակաւոր Կեսարիոյ (Գայսէրի)։

17. Արհի. Յովհաննէս Եպ. Նազլեան, Վիճակաւոր Տրապիզոնի։

18. Արհի. Յովհան Եպ. Գուզեան, Վիճակաւոր Աղեքսանդրիոյ Եգիպտոսի։

Գործուչիններու Կարգէն վեր. Հ. Բայմանտոյ՝ մասնաւորապէս հրաւիրեալ, գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ, ուղղեալ առ Սինոդական Հարս և առ հաւատացեալս, որ և խորին տպաւորութիւն ձգեց ամենուն վրայ։ Մենք հոս կ'ուզենք համառօտել այս քարոզը.

«Քրիստոս Տէրն մեր իւր աստուածային արեամբ գնած հոգւոց փրկութիւնը դիւրացնելու համար գումարուելիք եպիսկոպոսական ժողովները նախատեսելով, իւր աննիւթ առընթերակացութիւնը խոստացաւ անոնց՝ ըսելով. «Ուր որ երկու կամ երեք հոգի իմ անուամբս գումարուին, ես անոնց մէջ պիտի ըլլամ»։

Այս Սիւնհոդոսին՝ որ պիտի հրատարակէ իւր վճիռները, կրնայ ըսուիլ որ կը գահերէցէ Յիսուս Քրիստոս. քանի որ Հարց որոշողութիւնք երկրաւոր նկատմունքներէ վեր եղան և սկսան յանուն Յիսուսի և Հոգւով Սրբով, որ իջաւ անոնց վրայ՝ ինչպէս ի Վերնատան, մտքերնին լուսաւորելու և առաջնորդելու, և սիրով բորբոքելու սրտերնին, ճշմարտութեան յաղթանակին համար։ Հարկ էր ուրեմն՝ հաւատոյ միութեան և աստուածային օրինաց պահպանութեան մէջ գալ փարիլ Ս. Պետրոսի Աթոռոյն, մի հօտ և մի հովիւ կազմելու. ինչպէս ծրագրած էր երկնաւոր Փրկիչն մեր։

Արևելքի մէջ երբեմն փայլեցաւ մի աստղ հրաշալի, Յակոբայ աստղը, որ իւր փայլով պիտի առաջնորդէր ժողովուրդներն առ Լոյսն աստուածային Իմաստութեան, որ եկաւ «լուսաւորելու ամէն մարդ» մոլորութեանց խաւարէն, յայտնելու Սուրբ Հաւատոյ գեղեցկութիւնները։ Այս աստղը տեսան Իմաստուններ, իմացան անոր նշանակութիւնը, և ծարաւի ճշմարտութեան՝ հետևեցան անոր մինչև որ կեցաւ. և տեսան մխիթարիչ տեսարան մը. մեծարելի Մերուանի մը, երիտասարդ Հարս մը, փափկասուն Մանկիկ մը մսուրի մէջ, ի խեղճութեան։ Տեսան հոն աստուածային երկնաշող լոյսը, խնդացին և յերկիր ինկան Մանկան առջև, երկրպագեցին Անոր իբրև իրենց Աստուծոյն, և երեք խորհրդաւոր ընծայներ մատուցին։

Այս դէպքը համեմատաբար կը նորոգուի այսօր։ Հայրերն՝ որ են

ճշմարիտ իմաստուններ, շարժեցան Արևելքէն, առաջնորդուելով հաւատոյ անպակասելի Աստղէն դէպ ի Հռոմ. յաւիտենական Քաղաքը «Ուր կը նստի Ցաղնորդը մեծին Պետրոսի». տեսան մեծարելի ծերունի մը, Պիոս Ժ. Քահանայապետը, որ պահապան է Աստուծոյ ընտանիքին՝ որ սփռուած է բոլոր աշխարհ. «Կացոյց զնա ի վերայ երկրին». տեսան երիտասարդ Հարս մը, Կաթողիկէ Եկեղեցին, Հարսն Քրիստոսի, որ ի հեճուկս հալածանաց և յարատև պատերազմներու, միշտ երիտասարդական թարմութեան մէջ է. տեսան Քրիստոսի դէմքէն ճառագայթող լոյսը, որ թէև հիմա ալ՝ ինչպէս երբեմն, մարդկային ապերախտութեան նշաւակ, սակայն ամօթահար կ'ընէ աշխարհի սուտանուն իմաստութիւնը» ի կոր կը կործանէ սմպարիշտները, և իւր ստքը կը կոչէ հզօրները՝ զմուցմամբ դիտելու իւր ամենակարողութեան սքանչելիքները։ Այսքան լուսոյ առջև, երկրպագեցին անանք Քրիստոսի, և ընծայեցին Անոր իրենց առաքելութեան գործերը, առաքինութեանց բուրումները և դիւցազնական զոհողութիւնները։

Անանք իրենց հոգիքը կաղդուրեցին յաւիտենական ճշմարտութեանց զօրութեամբ, և իմաստուն կարգադրութիւններով ամտեսեցին միութիւնն և անարատութիւնը այն Հաւատոյ՝ որ ժողովրդոց մտքին լոյսն է, ապահով առաջնորդ ի կեանս, և միակ միջոց փրկութեան։ Եւ պիտի դառնան իրենց ժողովուրդներուն, ինչպէս սուրբ Մոգերը, ուրախ և եռանդուն, հաւատքի առաքեալներ, ճշմարտութեան քարոզիչներ, Աստուծոյ իրաւանց քաջարի պաշտպաններ։ Բայց պիտի չարչարուին այս ազնիւ պաշտպանն համար, պիտի անարգուին ու ծաղրուին այն աշխարհքէն որ չուզեց ճանչնալ Փրկչին խաղաղասէր տէրութիւնը. բայց ասոր համար պէտք չէ կասիլ. մինչև իսկ արեամբ պէտք է կնքել հաւատոյ դաշինքը։

Արդարութեան ու ճշմարտութեան համբէն պէտք է դառնան իրենց տեղերը, սիրով վառ բորբոք, զի «Սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ». պատմեն իրենց որդւոց հոս իրենց տեսած սքանչիլիքը. Ս. Պետրոսի Աթոռէն առած կորովով գործեն առաքելական եռանդեամբ. տրծարծեն անոնց հոգիներուն մէջ սէր առ Քրիստոս, առ Նորա Հարսն՝ Ս. Եկեղեցի, առ Սրբազան Քահանայապետն՝ անքուն Հովիւ քրիստոնէական Ընտանեաց։ Եւ այսպէս պիտի ըլլայ «մի հօտ և մի հովիւ». և Եկեղեցւոյ մէջ, որ է սիւն և հիմն ճշմարտութեան, լոյս պիտի ըլլան կոյրերու, առաջնորդ՝ մոլորեալներու, ապաւէն՝ տկարներու։

Եթէ չարչարուին, եթէ հալածուին, եթէ ապերախտութեան հան-

դիպին, եթէ լան անսասան պէտք է յիշեն թէ « Զտուաւ իրենց հոգի վհատութեան, այլ զօրութեան ». անդադար աշխատին և քսիրդին. քանզի Ջրոյ կաթիլը շարունակուելով քարերը կը ծակէ, այսպէս իրենց խօսքը, Հոգւոյն Սրբոյ շնորհքով և զօրութեամբ, պիտի շարժէ քարացեալ սրտերը, պիտի բերէ զանոնք սիրոյ քաղցր օրէնքին, հաւատոյ միութեան, առ միակ Հովիւն, Քահանայապետն Ս. Եկեղեցւոյ: Իրենց վշտաց մէջ այս պիտի ըլլայ իրենց յաղթանակը. և պիտի ափոփուին փրկելով այն հոգիները որոնք առանց իրենց պիտի կորսուէին: Պիտի մխիթարուին խորհելով Առաքելոյն խօսքը թէ՝ « Ամենեքին որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն »: Նոյնպէս պէտք է յիշեն որ Աստուծոյ Որդին եկաւ յաշխարհ, բայց մարդիկ իրեն հակառակեցան, ժխտեցին Անոր աստուածային առաքելութիւնը. « Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան ». մանաւանդ թէ խաչի վրայ, ահաւոր ցաւերու մէջ, իւր արեամբը կնքեց զայն, Քահանայ յաւիտենից և անբիծ Պատարագ, որով փրկեց զաշխարհ: Խաչով պիտի յաղթեն իրենք ալ և ցաւոց զոհաբերութեամբ:

Հաւատոյ լուսով զօրացած և բարեկարգութեան կանոններով պիտի դառնան իրենց երկիրը՝ այն Հռոմէն ուր դարձած են բոլոր Քրիստոնէից աչքերը. սերտիւ միացած Ս. Պետրոսի Աթոռոյն. միշտ աչքի առջև ունենալով արութեան և հեզութեան աղնիւ օրինակն զոր նկատեցին Քրիստոսի Փոխանորդին, Պետրոսի Յաջորդին, Եկեղեցւոյ Հայրապետին վրայ, որ իբրև թէ նոր Գողգոթայի մը վրայ՝ կը զգայ՝ քրիստոնէութիւնը չարչարող բոլոր ցաւերը. յիշելով այն ճառագայթարձակ լոյսը որ կը շողար այս ցաւոց Մարդուն դէմքէն, շող իւր հոգւոյն անդորրութեան, համակամութեան, վստահութեան:

Դառնան իրենց ժողովրդոց և սրվեցնեն պահպանութիւն Կանոնական Իրաւանց, պարտքը՝ անսարս իրենց խօսքին՝ իբրև թէ Յիսուսի Քրիստոսի Զայնն ըլլար ան. « Ոչխարք իմ՝ ձայնի իմում լսեն »:

Այսպէսով պիտի առաջնորդեն նաև այն մոլորելոց, որոնց համար կ'ըսէ Յիսուս. « Նաև ուրիշ ոչխարներ ալ ունիմ ես, որոնք այս գաւթէն չեն. զանոնք ալ պէտք է որ հոս բերեմ. անոնք ալ իմ ձայնս պիտի լսեն. ու պիտի ըլլան մէկ հօտ և մէկ հովիւ »:

Ուստի եկեղեցական բարեկարգութեան իմաստուն որոշողութիւններով վերանորոգուած, լուսափայլ պիտի դառնան իրենց ժողովրդոց, ինչպէս դարձաւի Մովսէս Սինայէ օրինաց տախտակներով, պիտի դառնան իրենց

խնամակալ առաջնորդներ նոր Իսրայէլի՝ կեանքի անապատին մէջ, ի խոստացեալ երկիրն, յերկինս։ Եւ մեծ մխիթարութեամբ պիտի կարենան ըսել. « Զորս ետուրն ինձ պահեցի. և ոչ ոք ի նոցանէ կորեաւ »։

Երթա՜ն ուրեմն իրենց զաւակներուն, Կաթողիկէ Եկեղեցւոյ Քահանայապետը պիտի հետևի իրենց մտքով ու սրտով. իրենց մէջ պիտի ըլլայ նա՝ իւր սիրոյն ու հոգւով. իւր արցունքները իրենց արտասուաց պիտի խառնէ. իրենց ուրախութեամբը պիտի հրճուի. եռանդեամբ յերկինս պիտի ուղղէ իր աղօթքը, որպէսզի ժողովուրդք ճանչնալով ճշմարտութիւնը, միանան իրեն՝ սիրոյ կապովը, ի միութեան Հաւատոյ, որպէս զի արդիւնաւորի յերկրի Փրկչին խօսքը. « Եղիցի մի հօտ և մի հովիւ »։

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Մինչև հիմա տարաձայնուած այլ և այլ դիտումներու քանի մը լուրերու առիթ ունեցած ենք պատասխանելու կամ լուսաբանութիւն տալու։ Սակայն ինչպէս գրեթէ միշտ կը պատահի սգիներու գրգռութեան մէջ, երբ կրքերը զայրանան և ճիշդն ու անճիշդը, ճշմարիտն ու սուտը շփոթուին, չմնար վստահելի աղբիւր մը, և ամէն զրոյցի՝ որքան ալ անհեղեղ ըլլայ այն, և նոյն իսկ երևակայական ենթադրութիւններու հաւատ կ'ընծայուի։ Զարակամներն այսպէս կ'ուզեն, քանզի կը փափաքին պղտոր ջրոյ մէջ ձուկ որսալ. բայց ցաւալին այն է որ անկեղծները, միամիտները, բարի արտամադրութիւն ունեցողներն ալ այս ստայոդ զրոյցներու և ենթադրութեանց զոհ կ'երթան, որ այնքան սուտ է, երբ խնդիրը եկեղեցական Իշխանութեան հետ եղած յարաբերութեանց շուրջը կը յածի։ Արդ մենք, թիւրիմացութիւնները փարատելու և անշահախնդիր ոգիներու ցանկալի ծառայութիւն մը մատուցանելու համար կ'ուզենք համառօտակի պատասխանել և ուղղել մի քանի սխալ և յերիւրեալ զրոյցներ՝ ի մասին եկեղեցական Իշխանութեան տարամադրութեանց։

1. Ենթադրուեցաւ թէ Հռոմ գումարուած Սինոդոսը ազգային Կանոնագիր մը պիտի պատրաստէ։ Արդ այս ենթադրութիւնը հիմնովին սխալ է, և մենք ի վիճակի ենք պաշտօնապէս զայդ յայտարարելու։ Սինհոդոսին զբաղմունքը բոլորովին տարբեր է. բացարձակապէս եկեղեցական է իր նիւթն ու վախճանը։ Հասարակութեանս եկեղեցական բարեկարգութիւնն է իւր կէտ նպատակին. բայց որոշ, ճշդուած, հաստատուն և գործադրելի կանոններու վրայ հիմնուած և Ս. Աթոռէն հաստատուած. որպէս զի վերնան տատամսութիւնք, երկբայական շաւիղներ, յարափոփոխ կարծիքներ, որոնց առջև Եպիսկոպոսաց գործը կը դժուարանար, օրով և բարեկարգութիւնը, բառին նշանակութեամբ, գրեթէ անհնարին դարձած էր մեր համայնքին մէջ։ Ամենամեծ և յոյժ ցանկալի բարիք մը պիտի ըլլայ այս, և անակնկալ յաջողութիւն մը համարելի։ Որով բարեկարգական իրաւասութիւնը ճշդուելով, բնականաբար զերծ պիտի ըլլայ այն՝ արտաքին միջամտութիւններէ, ոտնձգութիւններէ. ո՛չ ոք պիտի կարենայ արհամարհել եկեղեցական կանոնները կամ ո՛և է կերպով ստրկացնել. Եկեղեցւոյ նուիրական իրաւունքն է այս։ Ուստի և խառն խնդրոց մէջ այս կէտը միշտ առաջի աչաց ունենալ պէտք է։

2. Որովհետև Ամենապ. Հոգևոր Տէրն մերժեց ծանօթ ծրագիրը և լուծեց ողբալի ապօրինութեանց յանգող ժողովը, ուզուեր է հետևցնել թէ նոյն Հոգևոր Տէրը՝ ա) բնաւ կանոնագիր չուզեր, բ) բնաւ ժողով չուզեր. գ) աշխարհականները կ'ուզէ ամէն վարչութենէ վտարել. դ) Հասարակութեանս շնորհուած առանձնաշնորհումները կ'ուզէ բոլորովին ջնջել։ — Արդ այս զրոյցներու շրջաբերութիւնը մասնաւոր դիտում մ'ունի. ուղղամտաց առջևն ալ զՀոգևոր Տէրը մեղադրելի ցոյց տալ. անոր համար պէտք է լաւ լուսաբանել այս խնդիրները, ցայտեցնել ճշմարիտը, որպէս զի միամիտք չխաբուին։

ա. Կանոնագիր չուզել, անկանոնութիւն ըսել է. զայս կարելի չէ ենթադրել ո՛և է քաղաքակիրթ մարդու մը համար, ու՛ր մնաց եկեղեցական Պետի մը համար։ Բնաւ ճշմարիտ չէ որ Հոգևոր Տէրը կանոն և կանոնաւոր գործ չուզէ. արդէն իւր պաշտօնն ինքնին կը պարտադրէ զայս։ Բայց կանոնը պէտք է 1. օրինաւոր ըլլայ. այսինքն՝ հարկ է որ օրինական իշխանութենէ բխած ըլլայ. և հեղինակաւոր հաստատութիւնն ունենայ։ 2. Սխալներ՝ մանաւանդ կրօնքի կամ Եկեղեցւոյ կանոնաց դէմ մոլորութիւններ չպարունակէ։ 3. Կանոնական իրաւանց ո՛և է կերպով չհակառակի և Ս. Աթոռէն դատապարտեալ չըլլայ։ — Ապա թէ ոչ քաոս մը

կը դառնար Կաթողիկէ Հասարակութիւնը. իշխանութիւն չունեցող քանի մը հոգւոյ մասնական և հակականոնական բաղձանքները ո՛չ միայն Պետը չընդունիր, այլ որ և լոյէ անհատ իրաւամբ կը մերժէ անոր հպատակիլ։ Ինքնատաց օրէնդրի ձևերով կարելի չէ պարաւանդել կրօնական հասարակութիւն մը. այդ տեսակ եկամուտ բռնակալութիւն անպատճառ կը մերժուի։ Իսկ օրինաւոր պայմաններու մէջ պարտադրուած Կանոնագիր մը կը փափաքի ունենալ Հոգևոր Տէրն, և պէտք է որ ունենայ։

բ. Նոյնպէս զլպարտութիւն մըն է ըսել թէ Կ. Պատրիարքը բնաւ Ժողովք չուզեր ունենալ։ Ամէն ոք կրնայ վստահ ըլլալ որ այսպիսի փափաք մը իւր մտքէն չէ անցած։ Ամէն վարչութեան մէջ խորհրդակցութիւնը իմաստութեան աթոռակից է. « Վա՜յ միայնոյն » ըսած է Ս. Գիրքը։ Անհատ մը, որքան ալ խելացի ըլլայ և ուսեալ և փորձառու, կրնայ սխալիլ։ Հարցնողը՝ լեռ կ'անցնի, չհարցնողը ճամբան կը մնայ, կ'ըսէ առածը։ Ուստի իմաստուն և երկիւղած Պետ մը խորհրդակիցներ, ժողովներ անպատճառ կ'ուզէ և պէտք է որ ուզէ։ — Բայց հոս ալ կան ընելիք դիտողութիւններ։ Խորհրդակիցներ՝ կ'ըսենք, ո՛չ իրաւանց յափշտակիչներ, ո՛չ բռնակալներ, որոնք զՊատրիարք իրենց բռունցքին մէջ կ'ուզեն առնուլ, կաշկանդել, տիրել, հրամայել, ծառայեցնել։ — Ժողովքներ՝ կ'ըսենք, ո՛չ անիմաստ պօռացողներ, եկեղեցական կանոններու դէմ կանոն շինողներ, Սինհոդոսի սպառնացողներ, անգլուխ և իշխանութեան ի հեճուկս գումարուողներ, իրենց Կ. Պատրիարքը անխիղճ լրագիրներուն և աշխարհի նշաւակ ընողներ, Հովուական սրբազան իշխանութիւնը ոտնակոխ ընողներ, մտքէ չանցնելիք ծայրայեղ ապօրինութիւններու յանգողներ. — բնական է, Կ. Պատրիարք մը այս տեսակ ժողովք մը չկրնար ընդունիլ։ Ապա թէ՞ պիտի ունենայ և պէտք է ունենայ պարտաճանաչ աղնուախոհ և Կաթողիկէ սկզբանց յարգադիր Աւագանւոյ ժողով, և անկէ բխած Վարչական, Թաղական, Աւյլն ժողովքներ, որոնք բնաւ պիտի չանիրաւեն՝ իրենց սահմանն անցնելով, և որոնց խորհրդակցութենէն պիտի օգտուի Կ. Պատրիարքը։ Ահա գուստ ճշմարտութիւնը, պարզ և յայտնի։

գ) Մինչև ցարդ ըսուածներէն կը հետևի որ Ամենապ. Հոգևոր Տէրը չուզեր, ինչպէս ոմանք կ'ուզեն ցոյց տալ, աշխարհականները ամեն վարչութենէ վտարել. բացարձակապէս սխալ է և այդ։ Աշխարհական տարրը մեր մէջ մեծամեծ բարիքներ ըրած է Հասարակութեան, իւր ազդեցութեամբ, գործունէութեամբ, բանիմաց խորհրդով և նիւթական ձեռնտուութեամբ. կամ տգէտ կամ սպերսխտ պէտք է ըլլալ զայս ուրանալու համար։

Անոնք հաւատքի համար դառն հալածանքներ կրած են. աղքատին ու ու-բին հայր եղած են. կրօնքին ամէն պատուէրները միշտ գործադրելով բա-ի օրինակ հանդիսացած են. իրենց եկեղեցական Պետերը միշտ յարգելով, անոնց թև թիկունք եղած են։ Ի՞նչպէս կրնայ ենթադրուիլ որ Հայրապետ մը ուզէ իր այսպիսի որդիներէն, այսքան մեծ օժանդակութենէն զինքը զրկել. ո՛չ, ո՛չ. անհաւատալի է այդ։ Անոնք որ ամէն չափ ու սահման կոխելով իրենք միայն տիրել կ'ուզեն, անո՛նք միայն կրնան այս տեսակ մտացածին բարուրանք յերիւրել, միամիտները խաբելու և իրենց Հոգևոր Հայրը վարկաբեկ ընելու, բամբասելու մտօք։ Ապա թէ ոչ Հոգ. Տէրն, օրի-նաւոր չափու և սահմանի մէջ, անհրաժեշտ պիտի օգտուի աշխարհակա-նաց թանկագին օժանդակութենէն, ըլլա՛յ ժողովներով ըլլա՛յ անհատաբար։ Ահա՛ միանգամ ընդ միշտ յայտարարուած է ի պաշտօնէ։

դ. Առանձնաշնորհումներու խնդիրը նոյնպէս ուղղուելու կարօտ է։ կ. Պատրիարքը բնաւ մտքէն չէ անցուցած Հասարակութեանս Ս. Աթո-ռէն շնորհուած առանձնաշնորհումները ջնջել։ Անիրաւ է այս ենթադրու-թիւնը։ Արդէն Ս. Աթոռն ալ միշտ խմաստութեամբ և գթութեամբ շար-ժած է, և չէ այն որ « յամենայն հողմոյ շարժի »։ Այս ենթադրութեան մէջ ալ սեղմում մը կայ սակայն։ Թէ՛ Ս. Աթոռը և թէ կ. Պատրիարքը բնաւ չեն կրնար հանդուրժել որ ամէն մարդ զեղծուի իր շնորհներով. ո՛և է կառավարութիւն պիտի չկարենար դայս ընդունիլ։ Ուստի կ'ուզուի առ առաւելն բառնալ՝ ո՛չ թէ առանձնաշնորհումները, այլ անոնց մասին գոր-ծուած զեղծումները։ Այս ալ շատ իրաւացի է. քանզի զեղծումը կը վնասէ միանգամայն շնորհողին և հպատակին։ Եւ մի՛թէ մեծամեծ վնասներ չունե-ցա՞նք այս զեղծումներէն. բաւական պիտի ըլլար՝ – համոզուելու համար, – աչքի առջև բերել ժողովրդական բարի վկայութիւններու գործը, տարի-ներէ ի վեր. ո՛րչափ դեր խաղացած են անոնց մէջ կուսակցական ոգի, կրքոտ գրգռութիւններ, հակականոն մղումներ, որոնք կամ անկարելի դարձուցած են ընտրութիւնները, կամ ցաւալի արդիւնքներ յառաջ բերած են մեր Նուիրապետութեան համար։ Ամէն ոք կ'ողբայ այս արդիւնքը. առանց հետազօտելու պատճառը, առանց անդրադառնալու զեղծումներուն վրայ։ Բացերես ըլլանք, անկեղծ ըլլանք. խոստովանիլը քաւութիւն է, լաւութիւն է, յառաջադիմութիւն է և դարման։

Եւ ահա ասոր համար է որ Սրբազան Քահանայապետը եպիսկոպո-սաց ընտրութեան և կարգման մէջ այս անգամ բացառութիւն մ'ըրաւ. կը շեշտենք, ԱՑՍ ԱՆԴԱՄՈՒԱՆ համար ՄԻԱՑՆ ԲԱՑԱՌՈՒԹԻՒՆ. չվեր-

ցուց բարի վկայութեան գործը, չնչեց այս առանձնաշնորհումը. այլ բացառիկ պարագաներն ի նկատի առնելով, իւր Քահանայապետական իշխանութեամբ ուղղակի անուանեց նոր Եպիսկոպոսները. տեսաւ եղած բարի վկայութեանց տեսակ տեսակ թերութիւնները. ըլլալիքներուն ալ վիճակը կռահեց՝ ոգւոց գրգռութիւնն նկատելով. արդէն ժամանակի սղութիւնը չէր ներեր, զի կ'ուզէր որ Իւր հրամայած Սինոդոսին մէջ իբրև սինոդական Հարք նստէին. այս ամէնուն վրայ խորհելով, բացառութիւն մ'ըրաւ միանգամ, և կարծեմք թէ մեր Նուիրապետութեան մակարդակին բարձրացման համար շատ լաւ արդիւնքի մը յանգեցաւ. քանզի վստահաբար կ'ըսեմք թէ այսքան ընտիր Հովիւներ բնաւ չէին ընտրուեր եթէ հիմա դիմուած ըլլար բարի վկայութեան։ Այր վասն սա եղած բացառութեան համար ուրախանալու առիթ և շնորհակալ ըլլալու պարտք ունինք։

Այս բաները շատ անգամ՝ թէ՛ Ամենապ. Հոգևոր Տիրոջ պաշտօնական գրութեանց և թէ՛ մեր թերթին մէջ յայտարարուած են. սակայն նորէն հարկ դատեցինք գրել։ Ուստի վերջացնելով մեր յօդուածը կը կրկնենք թէ պէտք չէ ամենևին հաւատ ընծայել այդ դիտումնաւոր և սուտուսուտ զրոյցերու և անոնց համար գրգռուիլ. այլ լսելով պարզ ճշմարտութիւնը, կը յուսանք թէ ուղղամիտները կատարելապէս գոհ պիտի մնան։ Որով և գաղափարները շտկուելով, ըստ մեր պարտուց և ի պատիւ մեր Հաւաքականութեան, պիտի դադրին ապօրինութիւններ, հակաքրիստոնեայ նախատինքներ, Աստուծոյ բարկութիւնը հրաւիրող յարձակումներ. և այսպէսով ի մօտոյ ամէնքս ալ սիրովն Քրիստոսի պիտի ողջագուրուինք ի համբոյր սրբութեան։



ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՎՄ

1. Սրբազան Քահանայապետը մասնաւոր ունկնդրութիւն շնորհեց Արհի. Յովս. Աբք. Թէոտորովիչի, Լէոպոլսի հայ-կաթողիկէ վիճակաւորին, որ կը գտնուի անդամ՝ ներկայ ազգային Պատրիարքական Սինոդոսի մէջ, ի Հռոմ

2. Osservatore Romano թերթը կը գրէ. « Գիտենք որ Սրբազան Հայրը որոշած է գազտնի կարդինալաց ժողովը (Concistoire) երկուշաբթի, 27 Նոյեմբեր, իսկ հրապարակականը յ30 նոյն ամսոյ, Հինգշաբթի։ Թափուր Աթոռներու եպիսկոպոսաց կարգումէն զատ, ինչպէս կը հաղորդուի մեզ, դիտում ունի Նորին Սրբութիւնը Կարդինալական պատուոյ ամբառնալ հետեւեալները.

Գեր. Յովս. Մ. Դօս ի Մախիոյ, Արք. Վալլատոլիտի.

Դեր. Տիմէտէ Ֆալգոնիոյ, Արք. Լարիսայ, Առաք. Նուիրակ Ամերեկայի Միացեալ Նահանգաց մէջ.

Գեր. Անտոն Վիգոյ, Արք. Փիլիպպէայ, Քահանայապետական Դեսպան ի Ապանիա.

Գեր. Գեննարոս Կրանիթոյ տի Պէլմոնթէ, Արք. Եդեսիոյ.

Գեր. Յովհ. Ֆարլէյ, Արք. Նիւ-Եորքի.

Գեր. Փրանկ. Պէօրն, Արք. Ուէսթմինսթրի (Լոնտրա).

Գեր. Փրանկ. Պաւէր, Արք. Օլմիւցի.

Գեր. Լեոն Ատոլֆ Ամէթ, Արք. Բարիզու.

Գեր. Գուլիէլմոս Օ'Գոնէլ, Արք. Պոսթընի (Ամերիկա).

Գեր. Փրանկ. Վիրգիլիոս Տիւպիյեար, Արք. Շամպէրիի.

Գեր. Փրանկ. Նակլ, Արք. Վիէննայ.

Գեր. Փրանկ. Մ. Բոլէրիէ տը Գապրիէր, Եպ. Մոնբէլիէի.

Գեր. Գայետանոս Պիզլէթի, Ն. Ս. Մաճճորտոմոյ.

Գեր. Յովհ. Մկրտիչ Լուկարի, Օգնական (Assessore) Ս. Ժող. Հաւատաքննութեան (S. Uffizio).

Վեր. Բասիլիոս Բոմբիլի, Քարտուղար Ս. Ժող. Ժողովոց.

Գեր. Հ. Լուդովիկոս Պիեոյ, ի Ցիսուսեան Միաբանութենէ.

Վեր. Հ. Գուլիէլմոս Վան Բոսսում, ի քահանայից Ամենասուրբ Փրկչի։

Գեր. Հենրիկոս Ալմարաց ի Սանթոս Արքեպ. Սիվիլիոյ։

3. Հոկտ. 30 ին Նորին Սրբութիւնն հանդիսաւորապէս ընդունեցաւ Արժանթինի Հասարակապետութեան լիազօր Պաշտօնեայն և Արտաքոյ կարգի Պատգամաւորը՝ Վսեմ. Անճէլօ Էսթրատա որ Սրբազան Հօր Ներկայացուց պաշտօնական հաւատարմագրերը։ Ընդունելութիւնը տեղի ունեցաւ Գահու Դահլիճին մէջ. Նորին Վսեմութիւնը Սրբազան Քահանայապետին ուղղեց խորին յարգութեան և որդիական հպատակութեան խօսքեր յանուն իւր և յանուն Հանրապետութեան Նախագահին. որուն սիրալիր բառերով կը պատասխանէր Սրբազան Հայրը, փափագ յայտնելով որ Ս. Աթոռոյ և Արժանթինի Հանրապետութեան միջև լաւ յարաբերութիւններն շարունակեն՝ ինչպէս մինչև հիմա, և աւելի ևս ամրապնդուին այսուհետև։ Եւ իրեն, Նախագահին և այն Տէրութեան բոլոր կաթողիկէից կը շնորհէր իր Առաքելական Օրհնութիւնը։ Այս առանձին ունկնդրութիւն մատոյց իրեն և իր Քարտուղարին, որոնք յետոյ իրենց յարգանքը մատուցին նաև Կարդ. Մէրի տէլ Վալի։ Վատիկանէն ելլելով Պաշտօնեայն ուղղակի գնաց Ս. Պետրոսի եկեղեցին՝ աղօթելու համար Առաքելապետին Գերեզմանին վրայ։

Նոյեմբեր 1ին, Ամենայն Սրբոց տօնին օրը, Փ. Հայ Դպրոցին եկեղեցւոյն մէջ Արհի. Յովհ. Եպ. Նազլեան Զայնաւոր Պատարագ մատոյց ի հանդիսատ հոգւոյ երջանկայիշատակ Լեւոն ԺԴ. Սրբազան Քահանայապետին, որ հիմնադիր եղած է Դպրոցիս։ Ներկայ էին Ամենապ. Կ. Պատրիարքն և Սինոդական Հարք։ Կատարուեցաւ նաև պաշտօն ննջեցելոց։ Սեղանի վրայ խօսեցան Արհի. Լեւոն Արք. Քէչէճեան և Ստեփ. Եպ. Իսրայէլեան, յիշատակն ընելով բարերար քահանայապետին և անմոռաց Հայրապետ՝ Կարդ. Հասունին, և մաղթելով երկարութիւն կենաց սիրեցեալ քահանայապետ՝ Պիոսի Ժ.ի. և Ամենապ. Կ. Պատրիարքին։ Շնորհաւորեցին իրենց եղբարքը, նոր օծեալ Եպիսկոպոսները. խնդակցեցան Սինոդական Հարց, մասնաւորապէս ընելով այսքան նախախնամական և փառաւոր Սիւնհոդոսի մը՝ որ դեռ առաջին անգամ կը պատահէր մեր Նուիրապետութեան մէջ, պատուաւոր և բարձր նշանակութիւնը և ունենալիք բազմօգուտ արդիւնքը։ Վերջացուցին մաղթանքներ ընելով այս Դպրոցի հաստատութեան, որ Մեծաւորաց գովելի ջանիւք բարի և ուսեալ առաքեալներ կը մատակարարէ Ազգիս։

Փ. Պիանիի
Տնօրէն Պատասխանատու

ՈՒՂՂԵԼԻ

Թերթիս 18ի թուոյն մէջ, էջ 224, Խարբերդի պաշտօնական Յայտարարութեան տակը կղերի ստորագրութեանց մէջ սպրդեր են սխալներ, որոնք կ'ուղղուին այսպէս

Ղեւոնդ Վ. Մինասեան — Սարգիս Վ. Խաչատուրեան — Ներսէս Վ. Պաղտիկեան
Եպ. կան Փխնրդ.

Յովհ. Վ. Մինասեան — Գրիգ. Ծ. Վ. Փիլիպոսեան — Յակոբ Վ. Փարթամեան
Ժղվրդպտ. Բազմաշէնի — Ժղվրդպտ. Դատեմի — Ժղվրդպտ. Արարկիրի

Սարգիս Քհնյ. Ենովքեան — Պօղոս Քհնյ. Գազանճեան
Օգն. Ժղվրդպտ.ի ի Դատեմ — Հոգբրձաւ. Փէռչէնճի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Պատրիարքական Սիւնհոդոս ի Հռոմ . . . . . էջ 240
Լուսաբանութիւն մը . . . . . » 246
Յեղեկագրական - Հռոմ . . . . . » 250

F. G. F.lli Parisi

ROMA — PIAZZA CAMPO MARZIO, 6 — ROMA

ԲԱՐԻԶԻ ԵՂԲԱՐՔ

Pontificia Fabbrica di Candele da Chiesa e Lumini da notte senza olio.

Candele speciali per la esportazione

Fornitori dell'Arcibasilica Lateranense, della Basilica Vaticana e di tutte le altre principali Basiliche e Chiese di Roma e d'Italia.

Esportazione in tutti i principali porti del mondo dove la Ditta spedisce la merce franca d'ogni spesa.

E' il più grandioso stabilimento che siasi dedicato esclusivamente alla fabbricazione di Candele per il culto.

Մոմեղինաց ի պէտս եկեղեցեաց կը պատրաստուին կանթեղք դիշերոյ առանց իւղի կը շինուին յատուկ մոմեղէնք արտածութեան համար.

Հայթայթիչք Լատերանեան աւագ Մայր եկեղեցւոյ և Վատիկանեան Մայր եկեղեցւոյ.

Յիտալիա և ի Հռոմ գտնուած միւս բոլոր աւագ և գլխաւոր եկեղեցեաց

Ընկերութիւնս աշխարհիս ամէն գլխաւոր նաւահանգիստներուն ապրանք կը ղրկէ՝ ծախքն իր վրայ. Ամենամեծ գործարանն է, որ միայն ի պէտս եկեղեցւոյ մոմեղինաց շինութեան կը պարապի:

Francesco Priotti

OTTICO

ROMA — CORSO UMBERTO I, 412 (Palazzo Fiano) — ROMA

ՓՐԱՆՉԷՍԿՈՍ ԲՐԻՕԴԴԻ

Grand assortiment en jumelles pour theatre, campagne et marine.

Jumelles prismatiques de la maison Zeiss.

Verres cylindriques, prismatiques et combinés.

On esécute toutes sortes d'ordonnances des MM. les Professeurs oculistes.

Կը վաճառէ ամեն գնով ամէն տեսակ դիտակներ թատրոնի, դաշտի և ծովու համար

Ունի երկաչեայ դիտակք հատուածակողմ ապակիով Ցայս Դործարանէն և Ապակիներ գլանացեալ, հատուածակողմ և զուգեալք.

Կը կատարուին ամենայն ճշտութեամբ որ և է յանձնարարութիւնք ՊՊ. ակնաբուժից.